

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կարէն Միքայէլեան—Զրկանքի Յոյգեր Թիֆլիզ 1907.

» » Զմբան Երեկոյ Մոսկվա 1912.

Մեզ յայտնի չէ ով է Կ. Միքայէլեանը, արդեօք դա կեղծ անուն է թէ իսկական (թերևս անունը կեղծ, ազգանունը իսկական լինի). նոյնպէս յայտնի չէ մեզ, թէ ինչ յօղուածներ և քննադատականներ են լոյս տեսել այս հատորների, մանաւանդ առաջինի մասին. այնպէս որ մենք առաջին անգամն ենք տեսնում այդ հատորները և առաջին անգամ ենք լսում նրանց հեղինակի անունը և ուրախ ենք ասելու, որ պատմուածքների այդ երկու փոքրիկ ժողովածուները գեղարուեստական մեծ բաւականութիւն պատճառեցին մեզ. ուրախ ենք արձանագրելու, որ յանձին Կ. Միքայէլեանի հայ գեղարուեստական գրականութիւնը մեր կարծիքով մի խոշոր գրաւում է անում իւր մէջ առնելով մի բանաստեղծի, որ մեծ արժանիքներ ունի և անպայման տաղանդ:

Այս նոր տաղանդը հիմնուած է գլխաւորապէս դիտողութեան լայն և բազմակողմանի դիտողութեան վրայ և իւր դիտածը այնքան կարճ և տպաւորիչ արտայայտելու կարողութեան վրայ. մի տպաւորութիւն, որ առաջ է գալիս, ոչ թէ Ֆարուայի բարդութեամբ, հետաքրքրականութեամբ, ոչ էլ շինծու և արուեստական վիճակներիով ու գրութիւններով, այլ իրերի բնական ու իրական նկարագրով, պատկերացումներով: Միքայէլեանի ամենամեծ առաւելութիւններից և կարելի է ասել մեր գրականութեան մէջ բերած նրա նորութիւններից մէկն այն է, որ նրա բոլոր պատկերներն առանց բացառութեան վերին աստիճանի պարզ և հարուստ ունին, նիւթը երեակայելիութեան աստիճան պարզ է և անպաճոյճ: Նրա լուազոյն պատմուածքներից մէկի մէջ հանդէս է գալիս հացթուխ Սիմոնը, որ զիւզէ զիւզ ընկած, տնէ տուն ման գալով ուրիշի համար հաց է թխում ու այդպէս տարիներ շարունակ, անդադրում, առանց ձանձրոյթի, մինչև որ նոյն զիւզն է գալիս մի այլ հացթուխ աւելի երիտասարդ ու աւելի ճարպիկ. և հացթուխ Սիմոնը, որ մինչ այդ զիւզի ամեն մի տան համար անհրաժեշտութիւն էր, այնուհետև բոլորի համար էլ դառնում է մի անտարբեր արարած, նոյնիսկ մի աւելորդ բնոյն: Մի ուրիշ պատմուածքի մէջ («Վրէժ») հերոսը միջնակարգ գործցի աշակերտներից մէկն է, որ զիշերօթիկ է մտած մի ընտանիքում և պատանեկական յուզումնալից ու անորոշ զգաց-

մունքով կապուած տանտիրոջ ազջկայ հետ, նրա համար իւր ձեռքով մի նկար նկարում և ընծայում նրան, ապա յուսահատութեան անդունդի մէջ դահավիժուած, երբ նկատում է, որ այն ազջիկը բոլորովին անտարբեր է դէպի նրա զգացմունքները Մի երրորդ պատմուածքի մէջ Մահակ-Թումանն է նկարագրուած, մի իշապան, որ իւր օրական պարէնը հայթայթում է էշերով բեռներ կրելով... և այդպէս են բոլոր պատկերները, հասարակ, անզարդ ու անպաճօճ, առանց էֆեկտների, սովորական գրութիւններ, Բայց Միքայէլեանը գիտէ այդ ըստինքեան անհետաքրքիր ու սովորական գրութիւնները դնել մի այնպիսի շրջապատի մէջ, փչել այդ ամբողջ միջավայրի վրայ մի այնպիսի տաքացնող և ջերմ շունչ, դնել այդ հերոսներին և նրանց հոգեկան աշխարհը այնպիսի պայծառ լուսաւորութեան մէջ ու այնպէս վարպետօրէն և կարող, որ մենք ուրախանում ենք, նկատելով Միքայէլեանի մէջ մի չնորհք, որ իւր յայտնուելու առաջին իսկ օրից զգալ է տալիս իրան և իւր տաղանդը՝ Նա կարծես իւր իշխանութեան տակ ունի ճառագայթների մի ամբողջ փունջ, որոնց ուղարկում է իւր ուզած ուղղութեամբ և անմիջապէս խաւար և մութ միջավայրը լուսաւորում է պայծառօրէն, ճիշտ է, մի քանի վարկեանով միայն, բայց տպատրիչ և ազդու և որ զլսաւորն է յուզիչ լոյսի տակ:

Նրա պատմուածքները կենդանի պատկերների մի պանորամա են, մանրամասն և ճշգրիտ հոգեբանական անայլիկ ներքին վիճակների, ուժգին թափանցումն ներքին տրամագրութիւնների և յոյզերի մէջ, Նա լոյսի փնջեր է արձակում մարդկանց հոգու մէջ և այնպէս ճիշտ բնական և կենդանի պատկերացումներ յաջողում: Շատ անգամ մի բառ, մի դարձուածք, մի փոքրիկ հումորի կտոր, և արդէն սխտուացիան պատրաստ է—ազդու և գունեղ:

Մի ուրիշ հանգամանք, որ նոյնպէս աչքի ընկնող է, այդ այն է, որ Միքայէլեանը իւր պատմուածքների նիւթը վերցնում է կեանքի զանազան կողմերից, Ամենաբազմազան պրոֆեսսիաների տէր մարդիկ նրա ուշադրութիւնը գրաւում են և նա գրանցով գրադուում է: Մի տեղ գիւղական վարժապետն է, որ մեր համակրանքի և ուշադրութեան առարկայ է լինում. մի այլ տեղ արհեստաւոր հացթուխը, որ կենդանի գոյներով բնական գծերով պատկերանում է մեր առաջ իւր արհեստի բոլոր մանրամասնութիւններով. մի երրորդ տեղ պատանի աչակերտն է իւր անորոշ ու տարտամ յոյզերով իւր սիրոյ զարթնումով. մի տեղ ուսանողական անհոգ կեանքն է նկարագրուած ուրախ և կայտառ, մի այլ տեղ գործարանի ճնշիչ մթնոլորդը և բանւորի նեղ վիճակը: Միքայէլեանը գիտէ նաև երեսայի հոգու մէջ թափանցել և այն լուսաւորել այնքան պարզ և նախ կերպով. ինչպէս պարզ և նախ է երեսայի

հոգին, պատկերացնել երեխայի ինքնասիրութիւնը, նրա պատուասիրութիւնը, նրա փոփոխական ծրագրերի անկայութիւնը, նրա վշտի և ուրախութեան անմիջականութիւնն ու սրտադինութիւնը (համեմատել Բ. հատոր, «Առաջին միշտ» և «Հայ թուրքական կոտորած»): Եւ այս ամենը յաջողուում է նրան առանց աշխատանքի, թեթև կերպով, հանաքով: Մեզ թւում է, որ հեղինակը իւր պատկերները մեծ հեշտութեամբ և թեթևութեամբ է գրում, առանց ջանք գործ դնելու, առանց երկար նախապատրաստական աշխատանքի, որովհետև ամենամեծ աշխատանքը—գիտողութիւնը՝ նա արդէն արել է, այդ շնորհքը նա արդէն բնատուր ունի և այն էլ մեծ չափով:

Միքայէլեանը տեսնում է և գիտում կեանքի մէջ ամեն մի մանրամասնութիւն, իւրաքանչիւր ըստ երևոյթին չնչին մի երևոյթ: Եթէ նա իւր հայեացքը դարձնում է ազքատ ուսանողի սենեակը, նա մի քանի բնորոշ և հետաքրքրաշարժ գծերով տալիս է ուսանողի ամբողջ շարժական կարողութիւնը, ամբողջ նրա ինվենտարը և այդ այնպիսի եզանակով, որ ընթերցողը ուսանողի սենեակի պարագաներից իսկոյն հետևութիւն է անում նրա հոգեկան դրութեան, նրա տրամադրութիւնների մասին: Եթէ նրա անորոշ և դիտող հայեացքը ներս է թափանցում երեխայի ննջարանը և խուզարկութեան ենթարկում նրա մահճակալը, այստեղ ևս աչքաթող չի անում համապատասխան միջավայրի իսկական նկարագիրը: Երբ նա ձմրան երեկոներին տաք սենեակի մէջ փակուած ինքն իրան է նկարագրում, իւր հոգեկան անդորր ու ինքնաբաւական տրամադրութիւնը—այն իաղաղ և երկարատև երեկոններից, երբ ոչ ոք նրան չի խանգարում, ոչ մի ձայն չի հասնում նրա ականջին, երբ այդ աստուածային խորհրդաւորութեան և կահաւոր յարմարութեան մէջ սկսում ես քո կեանքով ապրել և քո հոգեկան ու մտաւոր աշխարհը թափանցել, մէկ մէկ քրքրել անցեալի յուշերը: ով չի ապրել այդ վարկեանը և ով չի զգայ այդ տողերի խոր և իրական զգացմունքը, չի համակուի այդ զգացմունքով ու ամառը, աղմկաշատ կեանքից յետոյ չի տենչայ այն երեկոնները, որոնք այնքան անաղմուկ են ու անդորր:

Շատ կենդանի գրուած է նաև «Սաքուլ խումբը» Գերմանիայի հայ ուսանողների կեանքից—համալսարանական մի փոքրիկ քաղաքում (անկասկած Ենայում, ինչպէս երևում է միջի հանգամանքներից): Չորս ուսանող-ուսանողուհիները իրանց կայտառ և շարժուն ու ուրախ բնաւորութեամբ զանազան վիճակների մէջ անվերջ կալէյդոսկոպի նման դալիս անցնում են մեր առաջով: Նրանք ներկայանում են մեզ մերթ ռեւտորանում գարեջրի սեղանի շուրջը բոլորած ուրախ ու բարձր քրքրիջով անմեղ հանաքներ անն-

լիս, մերթ կանաչազարդ բլրակի լանջին ծաղիկներ քաղելիս և ծաղիկների հետ խազեր սարքելիս, մերթ հանգիստ ու անալիք գետի վրայ երկու առանձին մակույկներով զբօսնելիս. այդ խումբն ապա մեզ ներկայանում է կայարանում, որտեղ երկու ուսանողները բաժանուելու են իրանց ընկեր ուսանողուհիներից—ապա Մաքուլի աննման հանաքախառն լրջութիւնը այնքան անկեղծ և բնական, այնքան համակող և անմիջական:

Միքայէլեանը ոչալիստ է. նրա մէջ իրականը, ոչալականը գերակշռող տեղ է բռնում և տիրող տոնն է նրա ստեղծագործութիւնների մէջ: Նրա մէջ չկան սանտիմենտալ գծեր, չկան հիւանդագին մեղմութիւն և զգացմունքի անառողջ տոներ: Նրա պատմուածքի միջից փչում է առողջ մի շունչ, որով համակուում են ընթերցողները, ամեն ինչ այտեղ իրական է ու բնական:

Մեր գրականութեան մէջ փոքրիկ պատկերներ գրող հեղինակներ բաւականին կան: Յիշենք Ահարոնեանին, Փափազեանին, Նար-Գոսին, Ա. Շահնազարեանին... Միքայէլեանն իւր այս երկու հատորիկներով մի անգամից իւր համար տեղ է նուաճում փոքրիկ պատմուածքների մեր լաւագոյն հեղինակների կողքին և մեր կարծիքով նա արժանի է այդ տեղին, որովհետև նա ոչ միայն նրանց համարժէք տաղանդ է հանդէս բերում, այլ և գրաւականներ է ցոյց տալիս նրանցից գերազանցելու. այդ կը լինէր բնական, ուստի և սպասելի:

Փոքրիկ պատմուածքներ և նովելլաներ գրողների համար մի փորձաքար կայ. նրանք մեծ մասամբ անյաջողութեան են հանդիպում, երբ ձեռնարկում են մեծ գրուածքների: Նրանց հատուածական զիտողութիւնն ու հատուածական անալիզը շատ դժուարութեամբ է ամբողջանում նրանց երեակայութեան մէջ. և նրանց մեծ ուսմանները իրօք դուրս են գալիս կրկին բազմաթիւ մանր ու փոքրիկ պատկերների մի շղթայ—միացած ներքին թոյլ կապերով: Այդպէս են Մոպասանի մեծ գործերը, այդպէս են Պաուլ Հայզէի և Գոգֆրիդ Կելլերի խոշոր ուսմանները, իսկ այդ մարդիկը նովելլաների և փոքրիկ պատմուածքների աննման վարպետներ են. դրանցից են նաև Չեխովը և Գորգին: Մեր մէջ ևս, փոքրիկ պատմուածքների լաւագոյն ներկայացուցիչները մինչև օրս չտուին մի ամբողջական գեղարուեստական մեծ գործ: Մենք մի կողմն ենք թողնում և շատ վաղահաս ենք համարում շօշափել այն հարցը, թէ արդեօք Միքայէլեանը կարող կը լինի արտադրել մի մեծ գործ այնպիսի յաջողութեամբ, ինչպէս նա իւր պատմուածքներն է դրել. վաղահաս ենք համարում մանաւանդ այն պատճառով, որ նրա տաղանդը կազմակերպման ճանապարհի վրայ է և որոշ ենթադրութիւն անել այդ ուղղութեամբ դեռ անկարելի է: Բայց այսքանն

ասենք, որ մեր գրականութեան համար նրա այդ պատմութեանը մեծ պլիւսներ են և մեր գրականութիւնը շահուում է գրանով և զեռաւելի կը շահուի, եթէ Միքայէլեանը շարունակի իրականի—աւելականի ազդեցութեամբ, դիտել և վերլուծել, ապրել և վերստեղծել:

Մի քանի խօսք էլ ասենք Միքայէլեանի լեզուի և ոճի մասին: Պատմութեանը պարզ երևում է, որ հեղինակն անշուշտ անցել է Հայկական որևէ դպրոց, որովհետև ընդհանուր առմամբ տիրում է հայոց լեզուին և անսխալ գրում է: Նրա լեզուն սահուն է, կանոնաւոր և հաճելի, մանաւանդ թէ հեշտ կարգացող: Բացի լեզուի կանոնաւորութիւնից Միքայէլեանի ոճը մի յատկութիւն ևս ունի, որ նա չէր կարող որևէ դպրոցում սովորած լինել, դա նրա պատկերաւորութիւնն է, ինքնայատուկ և պայծառ, կոնկրետ գծերով և որ գլխաւորն է, այդ պատկերները ձուլում են նրա հոգու մէջ հեշտութեամբ, ինքնաբերաբար և արագօրէն, առանց ներքին ճիգ ու ջանքի, առանց աշխատանքի: Կայ մի այլ հանգամանք, որ նոյնպէս կարևոր է ի նկատի ունենալ. Միքայէլեանը անշուշտ առականները կամ անտարբեր իրերը երևակայում է շատ անգամ կամքի, կեանքի տէր և նրանց այնպէս է նկարագրում, կարծես շնչաւորների հետ գործ ունի: Բաւականանալով մի երկու օրինակներով. «Սլացող դնացքից նրան թւում էր, որ դաշտերն ու ցանքսերը ջրաղագի մի հսկայական քար լինեն, որոնք պտտում են ու անցնում նրա առաջնով» (բ. 116). «Մի փոքր անց՝ տատիկը գլուխը հանեց վերմակի տակից և հանգցրեց ճրագը. մի ակնթարթում բոլոր ստուերները զուրս ցատկեցին իրանց դարաններից և կլանեցին սենեակը» (բ. 130): Նրա հերոսներից մէկը երանի է տալիս փոքրիկ մանուկներին պատանիներին, կառապանին և առհասարակ իրանց գործերով զբաղուած մարդկանց, «որովհետև նրանցից իւրաքանչիւրը կեանքի մի նեղ փողոցն էր գնում՝ զազափար անգամ չունենալով այն մեծ հրապարակի մասին, որտեղից բոլոր նեղլիկ փողոցներն են երևում». (բ. 76—77): «Գիւղաքաղաքը թուխս մտած գիշերւայ սև թեւերի տակ արդէն մտել էր խորը քնի մէջ»: (Ա. 36): «Ամպերի փոքրիկ խմբեր գալիս ու անցնում էին շարան շարան լուսնի առաջով, յաճախ նսեմացնելով նրա լոյսը: Կարծես մի շարածճի մանուկ նստած վերևում խաղալիս լինէր տիեզերական այդ մեծ ճրագի հետ, մերթ իջնցնելով և մերթ բարձրացնելով նրա պատրոյկը»:

Սրանով վերջացնում ենք մեր փոքրիկ գրախօսականը Կ. Միքայէլեանի պատմութեանը մասին մի անգամ ևս յայտնելով մեր ուրախութիւնը նրա երևոյթի համար մեր գրականութեան մէջ և ցանկանում ենք, որ նա հետզհետէ իրան մշակելով ազատուի նաև այն աններգաշնակ տոներից, որոնք երբեմն խառնուում են նրա ստեղծագործութեան մէջ (օրինակ «Նահանջը» «Փորձութեան ժամին»):

Գ. Ալբուցեան.